«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Դանիել Վարուժանի կյանքի արտացոլումը նամակներում

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Այվազյան

Տարոնիկի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….4

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ…..7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……13

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վարուժան տակավին քսանութ ձմեռներու գարուն է ողջունած և արդեն անմահության դափնիներ կկրե... Իր ներկա գործը որքա՛ն հոյակապ տակավին նախաբանն է անոնց, որոնք պիտի գան հայ գրականության փառքերեն ըլլալ։

Տիգրան Չուկուրյան

Դանիել Վարուժանի նամականին կազմում է նրա թողած գրական աշխարհի կարևոր էջերից մեկը։ Այդ նամակներից շատերում արտացոլված են բանաստեղծի կյանքը, տագնապները, սարսափները, հույսերն ու երազանքները։ Նամակները նաև սև օրերի պատկերներ են, ճշմարիտ, փաստացի օրագրություն, որը, սակայն, գրողի տաղանդի յուրահատկության շնորհիվ հնչում է որպես բանաստեղծական դրամա։ Այս կյանքը՝ նամակներում, նույնքան հարազատ ու բնական արտացոլվել է նաև Վարուժանի պոեզիայում։

Եվրոպայում համալսարանական կրթություն ստացած, համաշխարհային ու հայ դասական արվեստը յուրացրած, բանվորականազատագրական շարժումներով ոգևորված բանաստեղծ Դանիել Վարուժանը հայ գրականհասարակական կյանքում բերեց նոր աշխուժություն ու շարժում։ Նա նոր խոսք ասաց պոեզիայում, հնչեցրեց ազգայինազատագրական պայքարի երգը։ Մարդկային կեղծիքի, մանր ու ճղճիմ կրքերի դեմ երգեց ուժի և գեղեցկության , հողի ու աշխատանքի գովքը։

Դանիել Վարուժանը (ծնվել է 1884 թվականին Արևմտյան Հայաստանի Սեբաստիա նահանգի Բրգնիկ գյուղում։ Գրաճանաչ է դարձել գյուղի վարժարանում, իսկ 1896

թվականից ուսումը շարունակել է Պոլսում։ Պոլսի բարդ մթնոլորտը շատ բան է տվել Վարուժանին։ Երկու տարի սովորել է Սագըղ Աղաճիի Մխիթարյան կաթոլիկական նախակրթարանում, այնուհետև՝ Քաղկեդոնի վարժարանում։ Վարուժանը հատկապես առաջ է գնում հայագիտության, լեզվի, մատենագիտության մեջ։ Նույն տարիներին սկսում է հաջողությամբ սովորել նաև օտար լեզուներ և հասնում է մեծ արդյունքի։ Վարուժանը տեսել է սուլթան Համիդի կազմակերպած ջարդի հետքերը, հոր բանտարկությունը, պանդուխտների տառապալի կյանքը։

1902 թվականին Վարուժանը տեղափոխվում է Վենետիկի Մուրադ Ռաֆայելյան դպրոցը։ Բանաստեղծին հետաքրքրում են Վերածնության շրջանի արվեստի գործերը։ Նա հափշտակությամբ տարվել է նշանավոր գրողների երկերով։ Վենետիկում ձևավորվեցին գրականքաղաքական Վարուժանն առանձին սիրով ուսումնասիրում է Հայաստանի պատմությունը, հայ հին ու նոր գրականությունը։ Վենետիկում էլ նա գրում է առաջին բանաստեղծությունները՝ պանդուխտների կյանքի և 1896թ. Ջարդերի թեմաներով։ Նրա՝ որպես բանաստեղծի ձևավորման գործում Վենետիկը նույնպես վճռական նշանակություն ունեցավ։ Այդ տարիների համար ինքը՝ բանաստեղծը, կարևորում էր ազդեցության և ուսումնառության երեք հիմնական գործոն՝ Ալիշայի շունչը, իտալական գրականությունն ու արվեստը, Վենետիկ քաղաքը.<<Վենետիկը կգունագեղե հոգիս. հոն առանց պատկերի անկարելի կըլլա ինշի խորհիլն իսկ, արվեստս փրկված է։

Վարուժանի պոեզիան հասարակական ցավերի ծնունդ է արյունով ու երկունքով,
եղել անձնական ու որի շնորհիվ հավերժ պահպանում է իր հմայքն ու

գեղեցկությունը։ Բանաստեղծի պոեզիայի մեջ համամարդկայինն ու ազգայինը ձուլված են։ Վարուժանի ստեղծագործությունը սերտ աղերսներ ունի համաշխարհային պոեզիայի հետ և միևնույն ժամանակ երբեք չի կորցնում իր ազգային դրոշմը։

Վարուժանի կյանքի բազմաթիվ իրողություններ արտացոլվել են նրա նամակներում։ Նամակներից շատերը բացահայտում են Վարուժան բանաստեղծի կերպարը, տրամադրությունները, կյանքի բազմաթիվ իրողություններ։ Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ քննության ենք առել Վարուժանի կյանքի արտացոլումը նրա նամակներում։ Այդ նպատակով մեր աշխատանքում առաջադրել ենք խնդիր՝ ուսումնասիրել այն նամակները, որոնք բովանդակում են գրողի կյանքի իրողություններ, տրամադրություններ և որոշակի ազդեցություն ունեն նաև նրա օոեզիայի ճիշտ գնահատման գործում։

Մեր աշխատանքի նպատակն է քննության առնել Վարուժանի նամականին, մասնավորապես այն նամակները, որոնք առնչվում են գրողի կյանքին։ Այդ նպատակով առաջադրել ենք հետևյալ նպատակները.

ա) աշակերտները կծանոթանան հեղինակի կյանքին և ստեղծագործությանը անմիջապես գրողից։

բ) կկարողանան ճիշտ վերլուծել գրողի ստեղծագործությունները, կապել նրա կյանքին։

գ) կհասկանան հեղինակի աշխարհընկալումը։

  Այս նպատակները ներառում են բոլոր անհրաժեշտ կոմպետենցիները՝ մշակութային, սոցիալական, խոսքայինլեզվական, գիտելիքի, ժողովրդավարական և այլն։

1910ական թվականներին՝ <<Հեթանոս երգերի>> ստեղծումից հետո Դանիել Վարուժանը թևակոխեց իր գեղարվեստական վիթխարի տաղանդի լիակատար

հասունացման շրջանը և պատրաստ էր իրագործելու մեկը մյուսից խիզախ ու դժվարին ծրագրեր։ Դրանցից առաջինը <<Հացին երգն>> էր, որը և, դեպքերի ողբերգական բերումով, դարձավ մեծ բանաստեղծի <<վերջին մատյանը>>։ Մահից առաջ գրողը ստեղծեց գեղարվեստական մի նոր հոյակապ կոթող, հայ բազմադարյան պոեզիայի ամենագեղեցիկ էջերից մեկը։ Եթե Վարուժանի նախորդ բանաստեղծական շարքերի թեմատիկան կապվում էր կա՛մ անցյալի տարբեր շրջանների, մասնավորապես հեթանոսական դարերի բանաստեղծական տեսարանների հետ, ապա <<Հացին երգումե Վարուժանը նկարագրում է բոլորովին այլ կենսական միջավայր՝ արևմտահայ գյուղի պատկերներն՝ իրենց հովվերգական իդեալականացված պատկերներով։

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ

Գրողի նամականին ընթերցողի առջև բացում է կենսագրական բազմաթիվ ուշագրավ փաստեր։ Հիացմունքով է կերտված հատկապես ծննդավայրի պատկերը. << Ծնած եմ 1884ին Սեբաստիո մոտ Բրգնիկ գյուղը՝ ուր աճած է մանկությունս, ուռենիներուն տխուր հովանիներուն տակ երազկոտ, կամ գետեզերքներուն վրա բաղերուն քարեր նետելով անառակորեն…։ Հայրս պանդխտած է Պոլիս, և մայրս ձմեռային երկար երեկոները՝ թոնրատունը նստած՝ երևակայությունս օրորած է ենիչերիներու և

գայլերու պատմություններով… Գյուղին դպրոցը հազիվ սկսած եմ ժամագիրքը սովրիլ՝ զիս տարած են Պոլիս 1896ի ջարդի կոտորածի օրերուն, ուր հայրս արյան սարսափի մեջ փնտրելե հուսահատ ՝ գտած եմ բանտին նեջ այն տխուր օրերուն ստորեն ամբաստանված... Երկու տարի հաճախած եմ Սագըզ Աղաճի Մխիթարյան դպրոցը. հետո Քաղկեդոնի վարժարանը, ուր երկար ատեն պատանեկությունս երազած է ընդմեջ Մոտայի ծովակին և Դուրյանի ոսկորներուն՝ Սկյուտար։ Արձակուրդներս ընդհանրապես անցած են հորս քով, Խավյար խանը, հայ պանդուխտներուն հառաչանքներուն և վերքերու տրոփյունին ունկնդիր>>։ Նուրբ երազները, սարսուռները, հոգեկան ցնցող պատկերները՝ հայրենի տարերքի հետ, ամենուր ուղեկցել են բանաստեղծին։

1896թ. 12 տարեկան Վարուժանը մոր հետ գալիս է Պոլիս, ականատես լինում ջարդի պատկերներին։ Արյան սարսափի մեջ որոնում է հորը։ Բանտարկյալ հորը նա պատմում է Բրգնիկում թողած <<սև վիպակների>> մասին՝ տատի մահը, մոր հիվանդությունը, չորացած վարդենին և այլն։ Նամակներում նա նշում է, որ իր գրիչը չի կարողացել արտահայտել այդ բոլորը, քանի որ <<տակավին թերավարժ է>>։ Հայրենի գյուղից հոր՝ պանդուխտ Չպուգքարյանի մոտ եկած Դանիել Չպուգքարյանը խոր տպավորություններ ստացավ։ Նրա մտքի և հոգու վրա, մի կողմից, խոր հետք թողեցին սոցիալքաղաքական ճնշումները, մյուս կողմից՝ Պոլսի գեղեցիկ բնությունը, ապա՝ ազգայինհայրենասիրական դաստիարակությունը վարժարանում։ Գրողը նամակներում նկարագրում է, թե ինչպես է թուրք խուժանը մորթել անզեն և խաղաղ աշխատանքով ապրող հայերին, անմեղներին բանտերն է լցրել։

1905 թվականին բանաստեղծը մեկնել է Բելգիա և ընդունվել Գենտի համալսարանը։ Այդ տարիներին էական դեր են խաղացել.նա սովորել է հասարակական ու քաղաքակակ գիտություններ, ուսումնասիրել գրականություն և սոցիալական ուսմունքներ։ Նրա դիմաքանդակը ընդգրկվել է Գենտի համալսարանի գլխավոր

գրադարանի դահլիճում։ Դիմաքանդակի վրա նշվել են բանաստեղծի հետևյալ խոսքերը.

Ի՜նչ փոյթ կեանքը մեռնող,

Եղբոր երազը ապրի,

Եղբոր երազը անմահ է։

Գենտում բանաստեղծի մեծ զբաղվածության մասին է հետևյալ նամակը.

<<Անսահմանորեն ցավում եմ, որ հակադրված եմ հրաժարվել ձեր ինստիտուտում իտալերեն դասընթաց վարելուց, որ դուք ինձ առաջարկում եք։ Հիմնական պատճառը իմ համալսարանական զբաղվածությունն է, ինչպես նաև այն նախազգուշացումները, որոնցով ինձ տեղյակ դարձրիք ձեր պայմանների մասին>>։

1912 թ.ին Վարուժանը հրավիրվում է Պոլսի Բերայի վարժարան ՝ տեսչի պաշտոնով։ 1906 թ.ին գրված մի քանի նամակներ արտացոլում են բանաստեղծի մի շարք հատկանիշներ՝ պատասխանատվության զգացում, նվիրվածություն կրթության նկատմամբ.<<Դուք արդեն հավաստիացրեք ինձ հաճույք պատճառեք ՝ տրամադրելով քաղաքական և հասարակական գիտությունների դասընթացի ձեր տետրերը... Հուսով եմ, որ դրանք կուղարկեք ձեր քննություններն ավարտելուց անմիջապես հետո...ձեզնից անկախ անփություն հանդես բերելու դեպքում իմ ապագան կխոտորվի,ով գիտե ինչ կերպարանափոխությամբ>>,՝գրում է Վարուժանը Պարոն Սալվադոր Ռոկ դե Պլինոյին ուղղված նամակում և ընդգծում է փորք ժողովուրդների,մասնավորապես հայ ժողովրդի պատմական դժվարին ուղին. <<Պատմությունը ճնշված ժողովուրդների և արդար գործերի սփոփիչն է։ Երբեք մի մոռացեք, որ մարդկային կյանքը վաղանցուկ է և դժվար է գերեզման մտնե՝ չողջունելով Հայրենիքիդ ազատագրումը և արդարության հաղթանակը...ձեր խեղճ

Հայաստանը , որը ես այնքան սիրում եմ, կհառնի, ինչպես Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան, Բուլղարիան, Ռումինիան...>>։

Կամ՝ <<Հայերենի հողեն քիչ հեռու եք, բայց արդեն կը զգաք այդ կար իր հողին՝ ընդերքներուն մեջ տրոփյունը դափնեպսակ հրճվանքին։ Երբ հորդ հաղթության ի պատիվ խմեք Վանի այգեստաններեն եկած գինին, բաժակի վերջին կաթիլին հիշեցեք օտար ամպերու տակ դեռ թափառող ձեր բարեկամը՝ և այդ կաթիլը ձեր մեջ սիրո նշխարքը պիտի խմորե...>, գրում է Ա.Չոպանյանին ուղղված նամակներից մեկում։

Գենտում սովորելու տարիներին համալսարանի պատերի մեջ չի սահմանափակել իր ժամանակը, նա շրջագայել է ողջ երկրով, այցելել է մշակութային վայրեր,թանգարաններ, ծանոթացել մարդկանց մշակութային կյանքին, ընթերցել է համաշխարհային գրականություն։ <<Մտադիր եմ այս օրերս Շեքսպիրի և Պայրնի ամբողջ գործերը գրել։ Գերմանական գրականության մեջ արդյոք ո՞ր հեղինակը ավելի ներշնչող է։ Ինձի նախընտրելի պիտի ըլլա ան՝ որ գույն մտածման հետ հավասար կը բարրացնե։ Ես այս բանը գտած եմ Շեքսպիրի և հյուկոյի մեջ>>, գրում է Ռաֆայել Պազարճյանին ուղղված նամակում։

Վարուժանի ստեղծագործությունը սերտ աղերսներ ունի համաշխարհային պոեզիայի հետ և միևնույն ժամանակ երբեք չի կորցնում իր ազգային դրոշմը։ Այդ մասին խոստովանել է նաև ինքը՝ բանաստեղծը իր նամակներում. <<Արդ, այդ վարուժանական ըսված պտղունց մը գեղեցկության համար ամչցնելու աստիճան կը շռայլեք գովեստներ, կամրապնդեք առաջին յոլեր և կըգուշակեք մեծ ապագա, ինչ որ ես բացարձակապես չեմ ընդունիր, և ընդունիր ուրիշ բան չէ, բայց թե ըլլալ ապշորեն միամիտ և մեկ գարեհացի պաշարով ձեռնարկել Սահարայի մը ճամփորդության։ ...Եթե ինձ համոզեք, որ զարկած քնարս մեկ լար ունի, և մյուսները օտար են և օտարներե զարնված, ես այսօր զայն կը ջախջախեմ...>>։

Վարուժանի բանաստեղծությունների առաջին գիրքը՝ <<Սարսուռները>>, լույս տեսավ 1906 թվականին։ Սկսնակ բանաստեղծի խոհերը տակավին թաթախված են

որոնումների երազներով։ Գրողը հակառակվում է այն քննադատներին, որոնք նմանություն են տեսնում այլ գրողների ստեղծագործությունների հետ. <<Ոչ, բարեկամ, <<Սարսուռները>>ը իմս է, ջղերուս կյանքն է ան։ Բոլորովին կը սխալվիք թե դուք թե Չոպանյան, երբ անձիս մեկ մասը Հյուկոյի ևԴուրյանի մեջ կբաժնենք։ Մանավանդ Դուրյանի. Այս սխալ է , հավերժորեն սխալ, կենսագրությունն ալ գրած է։ ...Նույնիսկ ողջ հինգ տարի է զայն ձեռք առած չունիմ։ Այսօր առաջին անգամ ձեզմե դրդված փոխ կ'առնեմ զայնի հայ ընկերներես մեկեն, որ ուսանող է Մուրատ Ռափայելյանի...>>։

Վարուժանի կյանքը թեպետ և ընդհատվեց երիտասարդ հասակում, բայց նա ստեղծեց հասարակական մեծ բովանդակության և գեղարվեստական կատարյալ ձևերի պոեզիա։ Նա հոգեկան մերձեցումներ ունեցավ համաշխարհային պոեզիայի խոշոր դեմքերի հետ ՝ պահպանելով, սակայն, իր ստեղծագործության ազգային ոճն ու դրոշմը։ Վերածնության շրջանի իտալականբև ֆլամանդական արվեստից կրած ազդեցության մասին՝ Վարուժանն ընդգծել է, որ իր վրձինը թաթախել է միայն հայրենի հողի <<որդան կարմիրիե և ծովալուփ արյանե մեջ։

Վարուժանի տողերում թաքնված է անձնական ապրումների հսկայականբհարստություն։ Բերենք թեկուզ անհատական սիրո դրամայի բանաստեղծական անձագանքները։ Այդ օրերին նա ընկերոջն ուղղված նամակում գրում է, որ գտնվում է Կանտի մոտ մի գյուղում՝ ահաբեկիչ առանձնության, լքիչ մենակության մեջ։ Տխուր է, մտատանջ, չի կարող բանաստեղծել, տողերից թույն ու լեղի է կաթում.<<Ժամեր կունենամ որ ես իմ թշնամիս կը դառնամ, ես ինձմե գրեթե կը սոսկամ։ Նրա մտքով երբեմներբեմն անցնում է ինքնասպանության միտքը, բայց նա մաքառում է անիծյալ կյանքի դեմ ՝ հետևելով ավելի վսեմ գաղափարին.

...Կանուխ է դեռ, իմ ձեռքերս իմ արյան մեջ

Թաթխելու, դեռ կանուխ է...

Կործանված սիրո մասին նամակում նա չի գրում. <<Իսկական պատճառը հոգեկան վտանգավոր դրությանս ՝ նամակով ըլլալուն հոս կը լռեմ։ Առայժմ այսչափ թե կը գտնվիմ Կանտի մոտ գյուղ մը...>>։ Բայց պատճառը պարզ էր։ Առաջին և ամբողջական բանաստեղծական արձագանքը, որի մի հատվածը նա ուղարկել էր Դերենիկին <<Նիրվանայի հորը>> խորագրով <<Լքումն>> էր։ Տպավորիչ այդ պատկերին խառնված է հայրենի տան հուշը։ Վիշտը մեծ է, հուսախաբությունը նրան ընտելացնում է մահվան, միայն լուսինը գիտի այդ ահավոր վերքի մասին։ Բայց անձնասպանությունը շուտ է, վիրավոր սիրտը դրան պատրաստ չէ։

<<Մեփական հողին վերադառնալու>> ձգտումների արձագանք էին Վարուժանի այն մտորումները, որոնք նա արտահայտում է 1908 թվականին Գենտից ընկերոջը հասցեագրված նամակում. <<Անպատճառ ամբողջ Հայաստանը պետք է տեսնել։

Կուզեմ համբուրել բոլոր այն տողերը ՝ ուր նահատակ մը ինկավ կամ հերոս մը կոխեց։ Մենք այնքան մեծ ենք ՝ որքան հողեն կը խմենք մեր զգացումները։ Ամեն ինչ հոդ է։ Դեպի մեր պապերուն։ Որ է՝ դեպի աստվածները։ ... Մեծն Տիգրանի վրա ինչ հոյակապ դյուցազներգություն մը կգրվի, բայց չէ կարելի առանց Հայաստանը տեսնելու։ Պետք է տեսնել այն ժայռերը՝ զոր մեր պապերը կը գործածեին իբրև պարսատիկի քար։ Պետք է տեսնել այն հարթ կաղնիները՝ զոր կը վառեին առանց արմատախիլ ընելու, և անոնց լույսին ներքև նստած իրենց հերոսական հաղթության մեծ տոնը կը տոնեին պետք է տեսնել ամեն ինչ, ամեն ինչ՝ զոր դու արդ կը տեսնես...>>։

ԱԶատագրական պայքարի գաղափարը Վարուխանի գեղարվեստական մտածողության մեջ ելքեր է որոնում դեպի <<հայկական ոգու>> փիլիսոփայական հայտնությունը։ Պատմական լայն տեսադաշտի վրա նա քննում է պատճառի ու հետևանքի առեղծվածը և փորձում կռահել հայկական տոհմիկ ոգու սուբստանցիան ներկան հերոսական չէր, բայց նրա էսթետիկան ձուլվածքը էպիկական մեծություն ուներ, ուժի և գեղեցկության պաշտամունք։

Այսպիսով ՝ Վարուժանի նամակները արտացոլում են ոչ միայն բանաստեղծի մտորումներն ու խոհերը հայրենիքի, տան մասին, այլև պատկերացում են տալիս նաև Վարուժանանհատի, ազգասեր հայ, տաղանդավոր գրողի մասին։

Նամակներում նաև արտացոլված է բանաստեղծի ստեղծագործական գործունեությունը, այն քայլերը, որոնք նրան պիտի դարձնեին նշանավոր գրող՝ ազդելով թե իր ժամանակի, թե իրենից հետո եկող բանաստեղծի վրա։ Այսինքն ՝ գրողի նամականին դառնում է նրա կենսապատումի կարևոր էջերը կրացնող կվկայություբ, որը բանաստեղծին դիտարկում է տարբեր դիրքերից ու գործունեություն տարբեր շրջանակներից։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դանիել Վարուժանու նամականու քննությունը բերում է հետևյալ եզրահանգմանը.

1. Նամականին օգնում է ճանաչելու բանաստեղծի մարդկային կերպարը, աշխարհայացքը, մտածողությունը, բացահայտում է այն սկզբունքներն ու դիրքորուշմները, որոնցով ղեկավարվում է գրողը մաիդկային հարաբերություններում։

2. Նամակներն օգնում են առավել ճշգրտորեն գնահատելու ոչ միայն նրա տարբեր ստեղծագործության բազմաթիվ կողմեր, այլև տեսանելի են դարձնում ստեղծագործողի կյանքի իրողությունները։

3. Վարուժանի նամակների ընթերցումը գաղափար է տալիս նաև բանաստեղծի անձնային հատկանիշների, հայրենիքի նկատմամբ անմնացորդ սիրո ու

կարոտի մասին։ Օտար ափերում դեգերող, աստանդական յանքով ապրող գրողը երազում է հայրենի եզերքի մասին։ Նրա երազանքն է երեք միլիոն ժողովրդի սրտի նշխարները հավաքել, միացնել մեկ սրտի տակ՝ << ի սեր Արվեստին, ի սեր կյանքի երգին>>։

4. Նամակներում արտացոլված են գրողի ծրագրերն ու ստեղծագործական քայլերը։ Որոշ նամակներից պարզ է դառնում, որ 1915 թվականին Վարուժանը շարունակում է լրացնել <<Հացին երգը>> շարքը, պատրաստվում է գրել <<Հայկական հոմերագիրքե ժողովածուն, ուր պետք է տեղավորեր հին հայկական առասպելների ու ավանդույթների մշակումները, երազում է ամբողջովին մշակել <<Սասնա Ծռեր ժողովրդական էպոսը>>։ Ծրագրել էր նաև գրել <<Գինիին երգը>> քերթողական հատորը։ Վարուժանի պոեզիան ստեղծվել է արյունով ու երկունքով, եղել անձնական ու հասարակական ցավերի ծնունդ, որի շնորհիվ հավերժ պահապանում է իր հմայքն ու գեղեցկությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղաբաբյան Ս. Ժամանակակիցներ և դասականներ
2. Դանիել Վարուժանի անտիպ նամակներից, <<Պատմաբանասիրական հանդես>>
3. Դանիել Վարուժան, երկեր
4. Դանիել Վարուժան, նամականի
5. Թամրազյան Հ. Հայ քնարերգուներ

6. Հայ դասական գրողները։ Դանիել Վարուժան
7. Սարինյան Ս.,Դանիել Վարուժան// <<Պատմաբանասիրական հանդես>>։